ՀՀ ՆԳՆ Միգրացիայի և քաղաքացիության

ծառայության պետի տեղակալ

Մ.Գևորգյանին

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՆԳՆ ՄՔԾ քաղաքացիության բաժնի գլխավոր փորձագետի կողմից

կատարված աշխատանքների վերաբերյալ

(08.01.2025-19.05.2025թթ.)

2025 թվականի հունվարի 8-ից 2025 թվականի մայիսի 19-ը ընկած ժամանակահատվածում ՀՀ ՆԳՆ ՄՔԾ քաղաքացիության բաժնի գլխավոր փորձագետ՝ Դիանա Միտուշի Մալխասյանի կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները՝

1. ուսումնասիրել եմ ՀՀ քաղաքացիություն ստանալու և ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ դիմումները, այդ թվում՝ ՀՀ արտաքին գործերի նախարարության միջոցով ուղարկված, ստուգել եմ փաստաթղթերի ամբողջականությունը, ՀՀ օրենսդրությամբ պահանջվող փաստաթղթերի՝ օտար լեզվով կազմված լինելու դեպքում նաև դրանց՝ սահմանված կարգով կազմված, հաստատված և թարգմանությունների հայերեն վավերացված լինելը, գործի հետագա ընթացքը շարունակելու նպատակով.
2. աջակցել եմ ՀՀ քաղաքացիություն ստանալու կամ դադարեցնելու վերաբերյալ գործերի կազմելու և վարելու աշխատանքներին.
3. տրամադրել եմ խորհրդատվություն, պարզաբանել եմ անձի քաղաքացիություն ստանալու, դադարեցնելու կարգի, անհրաժեշտ փաստաթղթերի, ժամկետների, ընթացակարգերի վերաբերյալ, անձի դիմումի հիման վրա տվել եմ պարզաբանումներ քաղաքացիություն ստանալու կամ դադարեցնելու գործերում առկա՝ գաղտնիք չկազմող տեղեկությունների, դիմումը բավարարելու կամ մերժելու իրավական հիմքերի վերաբերյալ.
4. ՀՀ քաղաքացիություն ստանալու կամ դադարեցնելու դիմումների վերաբերյալ կատարել եմ հարցումներ, կազմել եզրակացություններ.
5. համապատասխան էլեկտրոնային համակարգ մուտքագրել եմ ՀՀ քաղաքացիություն ստանալու և ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ փաստաթղթերը, դիմումատուի համար էլեկտրոնային շտեմարանի միջոցով ձևավորել և նրան տրամադրել եմ դիմում-հարցաթերթիկում նրա կողմից լրացված էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկել եմ անհատական ծածկագիրը.

6. իրականացրել եմ ՀՀ քաղաքացիություն ստացած կամ քաղաքացիությունը դադարեցրած անձանց գործերի արխիվացման աշխատանքներ:

Հարգանքով՝

ՀՀ ՆԳՆ ՄՔԾ քաղաքացիության

Բաժնի գլխավոր փորձագետ՝ ------------------------------------ Դ.Մալխասյան

<<-19->>---05-------------2025թ.

Հաշվետու ժամանակահատվածում կատարած աշխատանքները

գնահատում եմ <<---Գերազանց------>>

ՀՀ ՆԳՆ ՄՔԾ պետի տեղակալ Մ.Գևորգյան ------------------------------------

<<-19->>---05-----------2025թ.